ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

ԵՐՐՈՐԴ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի առաջնային շահառուների կարիքների և այդ ծրագրերի մասին նրանց կարծիքի ուսումնասիրության, ՄԳ համակարգի համար անհրաժեշտ տեղեկատվությունների հավաքման համակարգի ներդրմանն ուղղված առաջարկների մշակման

Ծրագրի ղեկավար՝ Սևակ Ալեքյան

24 օգոստոսի, 2018թ.

Պատվիրատու՝	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ
Խորհրդատու՝	«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ
Ծառայության նկարագրություն՝	ՀՀ ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված խնամք և սպասարկում իրականացնող 22 ՊՈԱԿ-ների կողմից տրամադրվող ծառայությունների ՄԳ ցուցանիշների և տվյալների հավաքագրման գործիքակազմի մշակում, ներկայացուցչական ընտրանքի ձևավորում և հարցումների իրականացում, ինչպես նաև մոնիթորինգային բոլոր ցուցանիշների հավաքագրում և գնահատման իրականացում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Հաշվետվությունների ներկայացման նպատակով կազմակերպված սեմինար-քննարկումների արդյունքները
3. ՀՀ ԱՍՀՆ համակարգում գործող ՊՈԱԿ-ների կողմից գնումների գործընթացներով ձեռք բերված սննդամթերքի գների ուսումնասիրություն
4. Այցելության արդյունքներ
5. Հետազոտության ընտրանք
6. ՄԳ ցուցանիշների թիվ
7. Առաջարկություններ
8. Մեջբերումներ լրացված հարցաթերթերից
9. Այցելությունների ժամանակ նկարված կադրերից

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՊՈԱԿ-ների ՄԳ անձնագրերի մշակում, այդ թվում՝ տեղեկանքներ և մոնիթորինգի ցուցանիշներ՝ քանակական և որակական:

ՄԳ ցուցանիշների հավաքագրման համար կատարվել են՝

- հետազոտությունների մեթոդների հստակեցում,
- գործիքակազմի մշակում, փորձարկում և համաձայնեցում (աշխատակիցների, շահառուների, նրանց ընտանիքի անդամների հարցաթերթիկներ, ֆոկուս խմբային հարցումների հարցաշարեր, դիտարկման հարցաշարեր և այլն):
- աշխատանքների կատարման գրաֆիկի մշակում և համաձայնեցում,
- հարցազրուցավարների և հետազոտողների վերապատրաստումներ,
- սահմանված ժամկետում աշխատանքների իրականացում:

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կազմակերպվել և իրականացվել են՝

- աշխատանքային հանդիպումներ/քննարկումներ, ներկայացվել են 22 ՊՈԱԿ-ների ՄԳ մշակված անձնագրերը, տեղեկանքներն ու գործիքակազմերը և ՄԳ-ի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման միջոցները:
- մեկ ընդհանուր սեմինար-քննարկում 22 ՊՈԱԿ-ների կողմից տրամադրվող ծառայությունների գնահատման նախնական արդյունքների մասին:

Կազմակերպված միջոցառումներին մասնակցել են ԱՍՀՆ աշխատակիցները, այդ թվում՝ ՄԳ ոլորտը համակարգող փոխնախարարը, ոլորտային վարչությունների և առանձնացված ստորաբաժանումների ներկայացուցիչներ:

3. ՀՀ ԱՍՀՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՊՈԱԿ-ՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1. 16 ՊՈԱԿ-ների կողմից ձեռք բերված ապրանքների միջին գները (դրամ)՝ ըստ ամիսների

	Կարտոֆիլ	Հյութ՝ մրգերի	Խնձոր	Տավարի միս՝ ոսկորոտ	Միս տավարի՝ փափուկ	Կարագ	Բուսայուղային հալեցված խառնուրդ	Շոկոլադ	Շաքարավազ	Մեղր
Հունվար										
16-ՊՈԱԿ-ների կողմից ձեռք բերված ապրանքների միջին գներ	130,94	251,75	256,93	1858	2520,61	2463,92	926,78	1167	383,15	2039,67
ԱՎԾ միջին գներ	212	622	544	2968	3835	5073	691	4212	359	4133
Փետրվար										
16-ՊՈԱԿ-ների կողմից ձեռք բերված ապրանքների միջին գներ	160,06	281,73	229,36	2510,14	2817,38	2959,53	895,58	1100	347,43	2845,78
ԱՎԾ միջին գներ	216	628	506	3026	3931	5068	695	4231	357	4134
Մարտ										
16-ՊՈԱԿ-ների կողմից ձեռք բերված ապրանքների միջին գներ	135,38	241,06	213,5	1979,67	2618,79	2440,63	861,58	1070,46	342,07	1850,67
ԱՎԾ միջին գներ	209	628	525	3054	3961	5162	703	4178	358	4126
Ապրիլ										
16-ՊՈԱԿ-ների կողմից ձեռք բերված ապրանքների միջին գներ	135,5	228	216,31	2025	2642,14	2444,81	859,55	1075,25	343,31	2312,44
ԱՎԾ միջին գներ	251	633	555	3062	3943	5207	710	4142	358	4125
Միջին գներ *(չորս ամսվա կտրվածքով)*										
16-ՊՈԱԿ-ների կողմից ձեռք բերված ապրանքների միջին գներ	140	250	229	2093	2649	2577	885	1103	353	2261
ԱՎԾ միջին գներ	221	627	532	3027	3917	5127	699	4190	358	4129

4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ըստ անհրաժեշտության ՊՈԱԿ-ում այցելություններն իրականացվել են 1-2 անգամ, որոնց ժամանակ հիմնականում դիտարկվել են՝

- հաստատությունների տարածքը,
- մաքրությունը,
- շահառուների ապրելակերպը,
- աշխատակիցների և շահառուների վերաբերմունքը,
- սննդի, դեղորայքի և տնտեսական պահեստները,
- ճաշարանը,
- լվացքատունը և այլն:

Դիտարկումներն ամփոփելիս՝ դուրս բերված խնդիրների մասին կատարվել են քննարկումներ տեղի ղեկավարության և նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ:

4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Դիտարկումներ

1. Գրանցամատյանների վարման կարգի խախտում (բուժկետ, պահեստ, լվացքատուն և այլն),
2. Հաշիվ-ապրանքագրերի, ստացականների և գնահատման ակտերի կազմման կարգի խախտում,
3. Հաշվապահական հաշվառման ոչ լիարժեք վարում և փաստացի ու ձևակերպված մնացորդների անհամապատասխանություն,
4. Գնումների գործընթացների սխալ պլանավորում,
5. Ապրանքների ընդունման գործընթացի թերացում,
6. Տնտեսական պահեստներում կուտակված մնացորդներ,
7. Հոգեմետ դեղերի պահման անվտանգության համակարգի թերացում,
8. Խոհանոցում պահանջվող սննդի նմուշների բացակայություն,
9. Շահառուների՝ հաստատություն ընդունման չափորոշիչների՝ ըստ առանձին դեպքերի ոչ կիրառելի լինելը,

4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Դիտարկումներ

10. Շահառուների թվաքանակի կանխատեսման թերացում,
11. Հաստատության ներքին կարգապահական կանոնների խախտումներ,
12. Աշխատակիցների քմահաճ վերաբերմունք շահառուների նկատմամբ,
13. Բռնության դեպքեր,
14. ՊՈԱԿ-ներում աշխատակիցների թերի իրազեկվածություն ՄԳ համակարգի վերաբերյալ,
15. Տարածքի անբավարար սանիտարահիգիենիկ պայմաններ,
16. Սենյակների ծանրաբեռնվածություն և հակասանիտարական վիճակ,
17. Շահառուների անբավարար սանիտարահիգիենիկ վիճակ:

4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Այցելությունների արդյունքում դուրս բերված և դեռևս չլուծված խնդիրների պատճառներից են.

- հետևողականության բացակայություն,
- աշխատակիցների մոտիվացիայի պակաս,
- վերահսկողության պակաս,
- անտարբեր վերաբերմունք աշխատանքի նկատմամբ,
- անբավարար ֆինանսական միջոցներ,
- գնումների գործընթացների սխալ պլանավորում,
- ոչ լիարժեք օրենսդրական կարգավորումներ,
- թույլ համագործակցություն շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ,
- խնդրի լուծումը կախված է այլ կազմակերպություններից/անձանցից (նախարարություն, ՏԻՄ, դոնոր և այլն):

4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 1. Գիշերօթիկ հաստատությունների ցուցանիշների միջին միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



- «Բյուրեղավանի երեխաների գիշերօթիկ խնամքի հաստատություն»
- «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություն»
- «Կապանի երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն»
- «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն»
- «Գյումրու երեխաների խնամքի թիվ 1 գիշերօթիկ հաստատություն»
- «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն»

4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 1.1. «Անհրաժեշտ խնամքի ստացում» ենթախմբի ցուցանիշների միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 1.2. «Հաստատության շենքային պայմաններ» ենթախմբի ցուցանիշների միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



«Բյուրեղավանի երեխաների գիշերօթիկ խնամքի հաստատություն»

«Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություն»

«Կապանի երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն»

«Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն»

«Գյումրու երեխաների խնամքի թիվ 1 գիշերօթիկ հաստատությունում»

«Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն»

4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 1.3. «Գնումների կազմակերպում» ենթախմբի ցուցանիշների միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 2. Տուն-ինտերնատների ցուցանիշների միջին միավորներ
(*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 2.1. «Անհրաժեշտ խնամքի ստացում» ենթախմբի ցուցանիշների միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 2.2. «Հաստատության շենքային պայմաններ» ենթախմբի ցուցանիշների միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 2.3. «Գնումների կազմակերպում» ենթախմբի ցուցանիշների միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 3. «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի ցուցանիշների միջին միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 4. Մանկատների ցուցանիշների միջին միավորներ
(1-ից 5 բալային սանդղակ)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 4.1. «Ծառայությունների տրամադրում» ենթախմբի ցուցանիշների միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 4.2. «Սննդով, հագուստով, անկողնային և սանիտարահիգիենիկ պարագաներով ապահովում» ենթախմբի ցուցանիշների միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 4.3. «Միջոցառումների կազմակերպում և կենցաղային պայմանների ապահովում» ենթախմբի ցուցանիշների միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 4.4. «Շենքային պայմանների ապահովում» ենթախմբի ցուցանիշների միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Գծապատկեր 4.5. «Աշխատանքների կազմակերպում» ենթախմբի ցուցանիշների միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)



4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Աղյուսակ 2. Ցերեկային կենտրոնների ցուցանիշների միջին միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)

Հ/Հ	Դիտարկվող ցուցանիշը	«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»		«Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»		«Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն»		«Երեխաների և ընտանիքի աջակցության կենտրոն»	
		Քանակական	Որակական	Քանակական	Որակական	Քանակական	Որակական	Քանակական	Որակական
1	Անհատական զարգացման ծրագրերի համապատասխանությունը (երեխաների թվին, ձևաչափերին)	4	4	4	4	4	4	5	4
2	Կրթական ծառայությունների տրամադրման պայմանները (մակերեսը, հագեցվածությունը)	4	4	5	4	4	4	4	4
3	Առողջապահական ծառայությունների տրամադրման պայմանները (մակերեսը, հագեցվածությունը)	4	4	4	4	4	4	3	3
4	Միջոցառումների կազմակերպման պայմանները (մակերեսը, հագեցվածությունը)	3	4	3	4	3	4	4	4
5	Սոցիալ-հոգեբանական ծառայությունների պայմանները (մակերեսը, հագեցվածությունը)	3	4	3	4	3	4	5	4

4. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարուն.)

Աղյուսակ 2. Ցերեկային կենտրոնների ցուցանիշների միջին միավորներ (*1-ից 5 բալային սանդղակ*)

Հ/Հ	Դիտարկվող ցուցանիշը	«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»		«Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»		«Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն»		«Երեխաների և ընտանիքի աջակցության կենտրոն»	
		Քանակական	Որակական	Քանակական	Որակական	Քանակական	Որակական	Քանակական	Որակական
	Անվտանգության պայմաններ (առկայությունը)	4	X	4	X	4	X	3	X
6	Անվտանգության պայմաններ (համապատասխանությունը և որակը)	X	4	X	4	X	4	X	2
7	Սննդի որակը	X	4	X	4	5	4	X	4
8	Սննդի քանակը	4	X	4	X	4	X	4	X
9	Ստացված և տրամադրված տեսականու համապատասխանությունը	5	X	4	X	5	X	4	X
10	Շենքի մաքրությունը	X	5	X	5	X	5	X	4
11	Շենքի օդափոխությունը	X	5	X	5	X	5	X	5
12	Շենքի ջեռուցումը	X	5	X	5	X	5	X	4
13	Շենքի լուսավորությունը	X	5	X	5	X	5	X	5
14	Սանհանգույցները	X	5	X	5	X	5	X	3

5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔ

Աղյուսակ 3. ՊՈԱԿ-ներում հարցվող կատեգորիաների ընտրանքային բաշխվածությունը

22 ՊՈԱԿ	Շահառուներ	Շահառուների ընտրանք	Աշխատակիցներ	Աշխատակիցների ընտրանք	Ընտանիքի անդամներ	Ընտանիքի անդամների ընտրանք
Մանկատներ						
«Երևանի մանկան տուն»			55	48		
Գյումրու «Երեխաների տուն»			92	74		
«Գավառի մանկատուն»	52	46	34	31		
«Վանաձորի մանկատուն»	75	63	34	31		
«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»	97	78	87	71		
«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն»	109	85	53	47		
Գիշերօթիկ հաստատություններ						
«Կապանի երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն»	64	55	16	15	43	39
«Վանաձորի երեխաների խնամքի N1 գիշերօթիկ հաստատություն»	108	84	36	33	67	57
«Դիլիջանի երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն»	104	82	28	26	65	56
«Բյուրեղավանի երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն»	78	65	25	24	37	34
«Գյումրու երեխաների խնամքի N1 գիշերօթիկ հաստատություն»	85	70	46	41	50	44
«Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի N2 գիշերօթիկ հաստատություն»	92	74	21	20	52	46
Տուն-ինտերնատներ						
«Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ»	280	280	34	31		
«Նորքի տուն-ինտերնատ»	222	141	49	44		
«Գյումրու տուն-ինտերնատ»	160	113	35	32		
«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ»	439	205	155	111		
«Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն	119	91	82	68		
«Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն»	1397	301	85	70		
Ցերեկային կենտրոններ						
«Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»	166	116	28	26	112	87
Երևանի «Ջատիկ» երեխաների աջակցության կենտրոն	152	109	40	36	99	79
«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն»	145	105	22	21	93	75
«Նուբարաշենի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»					93	75
	3,944	**2,163**	**1,057**	**900**	**711**	**592**

6. ՄԳ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԹԻՎ

Աղյուսակ 4. Քանակական և որակական ցուցանիշներ

	ՊՈԱԿ	Ցուցանիշներ	
		Քանակական	Որակական
1	«Բյուրեղավանի երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն»	124	21
2	«Վանաձորի երեխաների խնամքի N1 գիշերօթիկ հաստատություն»	146	17
3	«Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի N2 գիշերօթիկ հաստատություն»	124	21
4	«Դիլիջանի երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն»	124	21
5	«Գյումրու երեխաների խնամքի N1 գիշերօթիկ հաստատություն»	146	17
6	«Կապանի երեխաների խնամքի գիրշեօթիկ հաստատություն»	124	21
7	«Նուբարաշենի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»	73	12
8	«Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»	130	75
9	«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»	130	75
10	Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն»	145	100
11	«Երևանի մանկան տուն»	113	12
12	«Գավառի մանկատուն»	119	19
13	«Վանաձորի մանկատուն»	119	19
14	Գյումրու «Երեխաների տուն»	113	12
15	«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն»	117	16
16	«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»	117	16
17	«Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ»	224	90
18	«Նորքի տուն-ինտերնատ»	224	90
19	«Գյումրու տուն-ինտերնատ»	224	90
20	«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն»	144	104
21	«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ»	180	55
22	«Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն»	98	139
	Ընդամենը	**3,058**	**1,042**

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ծրագրերի մշտադիտարկման և գնահատման մեթոդաբանության վերաբերյալ՝ սոցիալական պաշտպանության ոլորտում գործող հաստատությունների աշխատակիցների համար պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ և իրականացնել իրազեկման աշխատանքներ, քանի որ շատ աշխատակիցներ տեղյակ չեն համակարգից:
2. Իրականացնել միջոցառումներ հանրության շրջանում ՍՊ ոլորտի ծառայություն մատուցողների հեղինակության, վստահության և քաղաքացիների իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես՝ կիրառելով հասարակության հետ կապերի (PR) բոլոր արդյունավետ միջոցները՝ միաժամանակ ապահովելով կամ ստեղծելով պայմաններ հասարակական (ՀԿ-ների միջոցով) վերահսկողություն իրականացնելու համար:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարուն.)

3. Հստակ սահմանված ժամանակահատվածում ապահովել, պարզեցնել, վերահսկել և հնարավորինս ճկուն դարձնել գնումների գործընթացները, մասնավորապես՝ սննդի, դեղորայքի և հագուստի ձեռքբերման համար ոչ թե հիմք ընդունել ամենացածր գինը, այլ նաև որակը և տեսականին: Վերանայել և առավել ճկուն դարձնել շահառուների՝ սննդով ապահովման գործընթացը՝ բացառելով շահառուների՝ հաստատությունում սոված գտնվելու փաստերը:
4. Պարբերաբար թարմացնել հաստատությունների նյութատեխնիկական բազաները, մասնավորապես՝ շենքային պայմանները, գույքը, սարքավորումները, համակարգչային տեխնիկան և այլն, ինչպես նաև կիրառել աշխատակիցների խրախուսման և շահադրդման արդյունավետ միջոցներ, որը կնվազեցնի կոռուպցիոն երևույթները:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարուն.)

5. Առավելագույնս մեծացնել սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագիր իրականացնող հաստատությունների համագործակցությունը միմյանց հետ, քանի որ շատ դեպքերում դա չի իրականացվում և/կամ թերի է իրականացվում, ինչի արդյունքում տուժում են շահառուները: Պայմաններ ստեղծել առողջ մրցակցության, փորձի փոխանակման և առավել որակյալ ծառայություններ մատուցելու մոտիվացիայի բարձրացման ուղղությամբ:
6. Ոլորտի պատասխանատուների կողմից կազմակերպել հարցումներին մասնակցած շահառուների կողմից բարձրացված խնդիրների ավելի խորքային ուսումնասիրություն և դրանց արդյունքներով, ըստ անհրաժեշտության, վերանայել համապատասխան օրենսդրական դաշտը:
7. Կատարել իրավական համապատասխան կարգավորումներ հետազոտությունների վերլուծություններով դուրս բերված խնդիրների կարգավորման համար:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարուն.)

8. ՍՊ ոլորտի աշխատակիցների պատասխանատվության զգացումը և զգոնությունը, ինչպես նաև շահառուների վստահությունը մեծացնելու համար, անհրաժեշտ է ծրագրերի ՄԳ արդյունքներով իրականացված միջոցառումները (հաշվետվություններ) տեղադրել Պաշտոնական կայքում և լուսաբանել ԶԼՄ-ներով:
9. Իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ 22 ՊՈԱԿ-ների կողմից տրամադրվող ծառայությունների գնահատման արդյունքներով դուրս բերված խնդիրների հնարավորինս արագ լուծումների համար, ինչպես նաև ՊՈԱԿ-ների ՄԳ ցուցանիշների հավաքագրման ընթացքում իրականացված դիտարկումների արդյունքներով դուրս բերված հարցերի կարգավորման ուղղությամբ:
10. ՊՈԱԿ-ներում/ՀԿ-ներում կազմակերպել կենտրոնացված գույքագրում, դուրս բերված պիտանի, բայց չօգտագործվող գույքը տեղայնացնել ըստ անհրաժեշտության:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարուն.)

11. Պարբերաբար իրականացնել ԹԵԺ գծով ՊՈԱԿ-ների ծառայությունների վերաբերյալ ստացված հաղորդագրությունների վերլուծություն՝ գնահատելու ահազանգված հարցերի լուծման ընթացքը, և արդյունքները հրապարակել պաշտոնական կայքի համապատասխան էջում:
12. Կատարել օրենսդրական կարգավորումներ շահառուների՝ հաստատություններ ընդունվելու կարգում, մասնավորապես՝ մի շարք դեպքերում պետք է հաշվի առնել ոչ թե շահառուի տարիքը, այլ ֆիզիոլոգիական կառուցվածքը և առողջական վիճակը (անկողնային հիվանդ և այլն):

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարուն.)

13. ՄԳ գործընթացներն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է.

- սահմանել քանակական և որակական արդյունքների թիրախներ՝ ըստ նպատակների,
- ՄԳ ցուցանիշների մշակման ժամանակ ներգրավել շահագրգիռ բոլոր կողմերին,
- օրենսդրությամբ կարգավորել տվյալների (այդ թվում՝ շահառուների անձնական տվյալների) տրամադրման ընթացակարգը, մասնավորապես՝ ՄԳ ցուցանիշների հավաքագրման համար պատասխանատու 3-րդ կողմ հանդիսացող կազմակերպությանը տեղեկատվության տրամադրման հարցում,
- ՄԳ դիտարկվող ժամանակահատվածը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել ծրագիրն իրականացնող հաստատության իրավակարգավիճակի փոփոխությունների հետ կապված բոլոր հարցերը:
- Ակտիվացնել ՀԿ-ների հավաստագրման ծառայությունների պատվիրակման գործընթացը՝ ապահովելով համեմատաբար պակաս ֆինանսական միջոցներով առավել որակյալ ծառայությունների մատուցումը:
- ՍՊ ոլորտում պատվիրակված ծրագրեր իրականացնող ոչ պետական կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերում անհրաժեշտ է նշել ՄԳ իրականացման պարտադիր պայմանը:
- Պայմանագրերում սահմանել փաստաթղթերի պահպանում մինչ ՄԳ գործընթացի իրականացումը:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարուն.)

14. Շահառուների հետ անցկացնել նոր միջավայրին հարմարվելուն ուղղված միատեսակ աշխատանքներ, մշակել և ներդնել համապատասխան ծրագրային ընթացակարգ:
15. Հաստատություններում դասապատրաստման աշխատանքների ժամանակ առավել լայնորեն կիրառել երեխաների հետ անհատական պարապմունքները, որոնք նաև հնարավորություն կտան բարձրացնելու երեխաների կրթական կարողությունները և առաջադիմությունն ընդհանրապես:
16. Հաստատություններում դասապատրաստման գործընթացում ձգտել ներգրավել փորձված, նեղ մասնագիտացում ունեցող մասնագետների, որոնք ի վիճակի կլինեն կիրառել դասապատրաստման ժամանակակից մեթոդներ:
17. Կարևորել երեխաների շրջանում մասնագիտական կողմնորոշման աշխատանքները և իրականացնել դրանք նախօրոք կազմված ծրագրի համաձայն՝ ընդգրկելով նաև ԱՍՀՆ-ի մասնագիտական կողմնորոշման ծառայության հնարավորությունները:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարուն.)

18. Նախատեսել վերապատրաստման դասընթացներ նեղ մասնագիտական ուղղություններով հասատությունների աշխատողների, մասնավորապես՝ սոցիալական մանկավարժների, բժիշկների և հոգեբանների համար:
19. Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի ներդրում, որի նպատակն է.
    - կազմակերպության ընթացիկ և ռազմավարական խնդիրների լուծման համար պահանջվող կադրերի օպտիմալ թվաքանակի որոշումը,
    - կազմակերպության կադրային պոտենցիալի շարունակական զարգացմանը նպաստելը,
    - կազմակերպության աշխատանքային կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտի շարունակական բարելավմանը նպաստելը,
    - կազմակերպության աշխատանքային կոլեկտիվի սոցիալական պայմանների բարելավմանը նպաստելը:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարուն.)

20. Ուժեղացնել հաստատության աշխատողների և դպրոցի ուսուցիչների միջև համագործակցությունը՝ կապված երեխաների կրթական կարողությունների ուժեղացման և երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունքն ու բռնության դեպքերն իսպառ բացառելու ուղղությամբ:
21. Բարելավել հաստատությունում մատուցվող առողջապահական ծառայությունների որակը, բժշկական սենյակների կահավորումը՝ հատկապես հաստատությունում գործող վարակակիրների համար նախատեսված մեկուսարանի կահավորումը, ինչպես նաև դեղորայքով ապահովվածությունը:
22. Ձեռնարկել քայլեր շահառուների կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ՝ հատկապես լոգասենյակների, սանհանգույցների, հանգստի և զբաղմունքների համար նախատեսված պայմանները, ինչպես նաև սպորտային միջոցառումների, սպորտով զբաղվելու և բակային խաղերի կազմակերպման պայմանները:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարուն.)

24. Իրականացնել խորհրդատվական և հոգեբանական բնույթի զրույցներ հաստատությունների շահառուների հետ, կազմակերպվող միջոցառումներին նրանց ներգրավվածությունը բարձրացնելու համար:
25. Ավելացնել շահառուների մասնակցությունը հաստատությունից դուրս կազմակերպված մշակութային միջոցառումներին (թատրոն, կինո, համերգ, այցելել տեսարժան վայրեր կամ պարզապես հնարավորություն ստեղծել, որ շահառուները քայլեն համապատասխան բնակավայրի փողոցներով և այգիներով՝ իհարկե հաշվի առնելով յուրաքանչյուր շահառուի հնարավորությունները և այլն), ինչպես նաև պարբերաբար կազմակերպել ՍՊ ոլորտի համապատասխան շահառուների փոխադարձ այցելություններ նմանատիպ այլ հաստատություններ: Հաստատությունների շահառուների համար պարբերաբար կազմակերպել Երևան քաղաքում զբոսանքներ, էքսկուրսիաներ տեսարժան վայրերում:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարուն.)

26. Պարբերաբար իրականացնել շահառուների, նրանց ընտանիքների անդամների և սոցիալական միջավայրի կարիքների գնահատում, ինչպես նաև նախատեսել քայլեր, որոնք կդարձնեն կարիքների գնահատման գործընթացն առավել թափանցիկ և հասկանալի ընտանիքների համար, միաժամանակ վերանայել նաև կարիքների գնահատման մեթոդաբանությունը: Աստիճանաբար անցնել հաստատատությունների բեռնաթափման և այլընտրանքային ծառայությունների համակարգի ստեղծման:

ՊՈԱԿ-ների կողմից տրամադրվող ծառայությունների գնահատման վերջնական արդյունքները՝ որակական և քանակական, ինչպես նաև հետազոտությունների վերլուծությունները, ներկայացված են հավելվածներով, որտեղ դիտարկումներից ելներով ներկայացվել են առաջարկություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

8. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ

Շահառուներ

1. Ջեռուցման հարցը շատ վատ է, ցանկանում է միայն, որ երբեմն ուշադրություն դարձնեն իրենց: 2000 թվականից հետո ոչ մեկ նախարարությունից չի եկել տեսնելու, թե իրենք ինչպես են ապրում:
2. Դռները լավը չեն, «ֆաներայից» են, ձմռանը փչում է նաև պատուհաններից: Շահառուն գեյզեր (էլեկտրական ջրատաքացուցիչ) է գնել, քանի որ հաստատության տրամադրածը վառվել էր: Համայնքապետարանի տված հացը վատն է, խմոր է: Ձմռանը 60,000 հոսանքի վարձ է տվել, քանի որ էլեկտրական ջեռուցիչ էր միացրել: Մեխից ու լամպից սկսած իրենք են գնում: Շահառուն կարիք ունի (շատերն էլ), որ իրենց խնամեն, ոչ մի բան չեն անում իրենց համար:
3. Ժամանակի ընթացքում, անկողնային հիվանդների համար, տակդիրի հարց է առաջանում, իսկ այս կառույցը տակդիր չի տրամադրում: Զարմացած են, որ նախարարության անունից եկել են ու հետաքրքրվում իրենցով: Շահառուն 33,000 դրամ կենսաթոշակ և 18,000 դրամ նպաստ է ստանում, ձմռանը ջեռուցման վճարը հազիվ է տալիս:

8. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ

Ծահառուներ (շարուն.)

4. Սննդից շատ դժգոհ է, ճաշերի մեջ յուղ չկա: Երկու շոկոլադ և հինգ հատ կարամել կոնֆետ են տալիս, հինգ կիսատ գդալ շաքար ամբողջ օրվա համար: Իր սենյակում մի հոգու հետ է ապրում, հիվանդ մարդ է, որ իր կարիքներն անկողնում է հոգում, ինքն էլ ստիպված է այդ օդը շնչել:
5. Ուսումը լավացել է, սակայն շատ բաներից դժգոհում է:
6. Այստեղ բանակի օրենք է, հին ապրողները զավթում են սենյակը և իշխում: Ամբողջ սենյակը իր հետ ապրողը գրավել է իր իրերով, տեղ չունի շարժվելու: Քայլերի ձայնը ազդում է նրա վրա, անգամ շնչառության համար է կռվում:
7. Լինում են դեպքեր, երբ աշխատակիցը հարվածում է երեխային: Ճաշարանի սնունդը հաճախ չի հերիքում: Լինում է, որ «դաբավկա» (լրացուցիչ բաժին) չի լինում ու սոված են մնում:
8. Հաստատության աշխատակիցը հարվածում է մեզ: Սոցաշխատողները տեղյակ են, բայց էլի հարվածում է: Շոր ընտրելուց մեր կարծիքը հարցնում են, բայց հաշվի չեն առնում:

8. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ

Ծահառուներ (շարուն.)

9. Շատ դժգոհ էր կինը, ինքը միակ դիետիկ սնվողն է հաստատությունում, բայց իր սննդակարգը ոչ մեկ հաշվի չի առնում: Ինքը միակ բողոքողն է երևի, որ ինչը սխալ է լինում խոսում է, իսկ մյուսները վախենում են, քանի որ տնօրենը նախարարի ընկերն է: Ինքը բողոքում է տնօրինությունն էլ վրեժխնդիր է լինում: Իր սենյակ են տեղափոխել հոգեկան հիվանդ կնոջ, մեկ ամիս է չեն թողնում, որ դուրս գա հաստատությունից: Բազմիցս փաստերով բողոքել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ: Մարդ էլ չեն <<դնում>> հետը, որպեսզի գնա խանութ իր ուզած ապրանքը գնի: Դեղորայք ամիսներ շարունակ չկա, ինքն է գնում մեծ մասամբ:
10. Շատ ուշադիր են աշխատողները ճաշ են եփում, տունը մաքրում:
11. Ամեն խմբին մոտ 7-8 հոգու համար տրվում է մեկ հատ օճառ, նույնը ատամի մածուկը:
12. Եթե դասալսող կամ ստուգող է գալիս, ինձ են կանչում, որ արտասանեմ, բայց հագուստ և կոշիկ տրամադրելուց ինձ անտեսում են: Ես ուսմունքի, երգի խմբակների եմ ուզում մասնակցել, բայց հնարավորություն չեն տալիս: Միսն ու պանիրը ուտել չի լինում, վատ հոտ է գալիս:

8. ՄԵՋԲԵՐՈՒՄ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ, ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԽՈՍՔԵՐԻՑ

Շահառուներ (շարուն.)

13. Անհրաժեշտ է սոցաշխատող: Տիկինը նշեց, որ բնակարանների վերանորոգման ժամանակ, իրեն ասել են, որ տեղափոխվի 5-րդ հարկից 9-րդ հարկ, տիկինն էլ ասել է, որ ի վիճակի չէ և խնդրել է տեղափոխվել նույն հարկում գտնվող՝ կողքի ազատ բնակարան: Բայց, քանի որ խողովակների փոփոխման ժամանակ բարձրաձայնել էր, որ դրանք բարակ են ու իր բնակարանում շատ ծնկեր կան, որ չեն դիմանա խողովակները, իրեն չեն ընդառաջել և ասել են, եթե չես գնում 9-րդ հարկ, չենք վերանորոգի քո բնակարանը: Հիմնական դժգոհությունն այն է, որ եթե դա իր սեփական բնակարանը չէ, ինչու՞ պետք է ինքը ծախս անի, ջեռուցում անցկացնի, մանավանդ որ չգիտի վաղը իրեն կհանեն այդ տնից, թե՝ ոչ: Տիկինը նշեց, որ այս կենտրոնը ընտանեկան բիզնես է գնալով դառնում, որ տնօրենի երեխաներն ու սանիկները էլ են այստեղ աշխատում: Ձմռանն իրենց աշխատասենյակներում շատ տաք է, իսկ իրենց բնակարաններում շատ ցուրտ:

14. Շահառուն ասաց, որ արդեն երկու տարի է ոչ ոք չի գալիս, եթե գալիս են, գրեթե չեն օգնում: Կազմակերպված միջոցառումներին չեն հրավիրում:

8. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ

Շահառուներ (շարուն.)

15. Աչքերի հետ խնդիրներ ունի, գրեթե չէր տեսնում: Շատ-շատ գոհ էր: Եթե միջոցառումներ կազմակերպվեն, ուղարկեն հանգստանալու ավելի հետաքրքիր կյանք կունենանք:
16. Առաջադիմությունը չի փոխվել, քանի որ դասապատրաստմանը չեն օգնում:
17. Ամսական նախատեսված 3.000 դրամ գրպանի ծախսը չի ստանում:
18. Մի քանի անգամ դպրոցի ուսուցիչը հարվածել է շահառուի գլխին: Երեխան նախկինում ոչ մեկի չի ասել դրա մասին:
19. Մսամթերքից գրեթե միշտ տհաճ հոտ է գալիս և չեն ուտում:
20. Երեխայի աչքը ամբողջությամբ կապտած էր:
21. Դժգոհում է հագուստի և կոշկեղենի որակից ու քանակից: Սնունդը, եթե մսով է ուտել չի լինում, ոնց որ սատկած մուկ լինի:

8. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ

Ընտանիքի անդամներ

1. Նախկին տնօրենի ժամանակ անձնակազմն ավելի ուշադիր էր: Նոր տնօրենը շատերին է փոխել, բայց նրանք կրթությամբ չեն համապատասխանում իրենց պաշտոնին: Միսն ու պանիրը երեխաները չեն ուտում, անտանելի հոտի պատճառով: Կոշկեղեն տալուց իրենք են որոշում՝ ում տան և ում չտան: Պետք է խնդրեն, որ տարին մեկ երեխային կոշիկ հասնի:
2. Ծնողը դժգոհեց դասվարից, քանի որ շատ կոպիտ է և դասը չի բացատրում այլ երեխաներին պարտադրում է արտագրել:
3. Ծնողն աշխատում էր և երեխայի՝ կենտրոնում գտնվելը շատ կարևոր էր ընտանիքի համար, բացի այդ երեխան շփման խնդիր ուներ, իսկ կենտրոնում շփումը մեծացել էր:
4. Միայն չփակվի հաստատությունը՝ երեխաները կդառնան անօթևան, մուրացկաններ: Շատ ծանր վիճակ է:
5. Ծնողը նշեց, որ հաճախ է պատահել, երբ երեխաներին հին սնունդ են տվել, որից հետո երեխաները իրենց լավ չեն զգացել:

8. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ

Ընտանիքի անդամներ (շարուն.)

6. Ընտանիքի անդամն անչափ դժգոհ էր, իր մեծ տղան էլ է հաճախել գիշերօթիկ, երեխային պատվաստում են կատարել գիշերօթիկում, որի պատճառով չի կարողանում քայլել: Արդյունքը եղել է այն, որ 200 ժամից ավելի բացակայություն է ունեցել, և տնօրենը նրան չի տեղափոխել հաջորդ դասարան ու ոչ էլ փաստաթղթերն է տրամադրել, որ տեղափոխեն այլ հաստատություն:
7. Ծնողը բավականին գոհ է, քանի որ աշխատանք չունի, ինչպես կարող է երկու երեխա պահել: Իսկ այսպես գոնե մեկ երեխայի հարցը լուծված է:
8. Ծնողը հուզված պատմեց երեխաների միջև տեղի ունեցած կռվի մասին, նաև որ վիրավորանքներ ու հայհոյանքներ են հնչել իր երեխայի հասցեին, ինչպես նաև համակարգչի դասընթացի ժամանակ իր համադասարանցիները խփել են շշերով:
9. Ընտանիքի անդամն իր երեք երեխաների հետ ապրում է առանց կոմունալ հարմարությունների կացարանում, և գիշերօթիկը երեխաների համար փրկություն է:

8. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ

Աշխատակիցներ

1. Հաշմանդամության կարգ ունեցողներին պետք է պոլիկլինիկան դեղ տրամադրի (խոսքը գնում է հատուկ դեղերի մասին), տարեցները աստիճան են բարձրանում, անալիզ հանձնում, դեղատոմսի համար են սպասում, 3-4 անգամ գնում-գալիս, հերթ են կանգնում, գնալուց ստիպված տաքսի են նստում, մանավանդ ինսուլին ստացողների դեպքը ծանր է:
2. Միայնակ տարեցները խուսափում են հիվանդանոցներ գնալ, քանի որ այնտեղ, օրինակ, շաքարային դիաբետով հիվանդին համապատասխան սնունդ չեն տալիս: Մի դեպք է եղել, երբ ոտքը գիպս են դրել ու ուղարկել տուն, վերակենդանացման բաժանմունքից դուրս են գրել միայնակ, անժառանգ կնոջը:
3. Ծանրաբեռնվածությունը մեծ է, 3 ամսվա մեջ 450-500, օրական մոտ 12 հոգու են սպասարկում: Ըստ կանչի է աշխատանքը, շաբաթական մոտ 45 այց պետք է լինի, որ հասցնենք: Ժամանակ է պետք, որ աշխատակիցների ու տարեցների միջև վստահություն ստեղծվի:

8. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ

Աշխատակիցներ (շարուն.)

4. Սոցսատարողին մաքրման համար համազգեստ տան կամ գոնե, ձեռնոց, և կոշիկ՝ շատ ենք քայլում:
5. Հաճախ են ստանում անորակ սնունդ, բայց, որպես կանոն, դրանք հետ են վերադարձնում:
6. Աշխատողների ավելացում և աշխատավարձերի բարձրացում: Բոլոր աշխատակիցներն անխտիր նշում են, որ եթե այլ աշխատանք գտնեն, թեկուզ ցածր աշխատավարձով, ապա դուրս կգան:
7. Միայն աշխատավարձն է շատ ցածր: 100 շահառուի հետ 6 մարդ է աշխատում, որը շատ քիչ է և աշխատանքն էլ շատ ծանր է:
8. Կաթսայատունը չի գործում, չկա ֆինանսական այնպիսի հոդված, որն ուղղորդվեր ջեռուցման կաթսաների վերանորոգմանը: Պարիսպները խարխուլ են: Պետական միջոցներ չունեն այդ հարցը լուծելու համար, բարերարներն էլ չեն կարող այդքան օգնել: Հեռուստացույցներն էլ հին են, այդ մասով գնում չկա, բարերարների նվիրածներն էլ հազիվ 10%-ն է ծածկում:

8. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ

Աշխատակիցներ (շարուն.)

9. Ծնողները բերում են գիշերօթիկ և ձեռքները ծալած սպասում են նպաստների օրերին:
10. Երբ մենք էինք գնումներով զբաղվում, խնդիրներ չունեինք, իսկ երբ դարձավ կենտրոնացված՝ ուշացումներ եղան: Աշխատանքային ծանրաբեռնվածությունն է մեծ:
11. 60%-ով կրճատել են աշխատավարձը, և շատ դժգոհ եմ, թեպետ նույն հոգատարությամբ աշխատում եմ:
12. Տակդիրենների հարցը շատ վատ է, քիչ է, չի հերիքում և անկողնային պարագաները շուտ են փչանում: Պետությունը մոռացել է մեզ: Մեկ երեխային 6 մետր քառակուսի է պետք, սակայն մեր ննջարանները 30 քառակուսի մետր են և 13-18 երեխա է ապրում, 5-ի փոխարեն: Ցնցումներով երեխան քնում է 2-րդ հարկում: Հաստիքները շատ քիչ են: Երեսունմեկ խմբի փոխարեն առկա է տասնվեց խումբ:

8. ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ ԼՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ

Աշխատակիցներ (շարուն.)

13. Գնումների գործընթացը (սննդի ապրանքների) չի համապատասխանում նշված ապրանքների տեխնիկական բնութագրին: Ապրանքների առաքման, մատակարարման առաջնահերթությունների հարցն է կարևոր, օրինակ՝ կաթը մեզ պետք է առավոտյան ժամերին, որ թթված չլինի օրվա վերջում: Իսկ իրենց մատակարարում են ըստ իրենց մոտ կետերի հեռավորության հերթականությունից ելնելով: Ցանկալի է, որ աշխատավարձերի բարձրացում լինի:
14. Քննարկումներ լինեին, որ որոշ հարցեր վեր բարձրացնեին: Սուպերվիզիայի կարիք ունեն, պրակտիկ սեմինարների կարիք ունեն: Սոցաշխատողները լավ կլինի՝ ունենային առանձին սենյակ խորհրդակցություններ անցկացնելու համար, առօրյա պայմաններ լինեին՝ անձեռոցիկ և այլն: Համակարգիչ լիներ:

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

BUSINESS CONSULT

Նկար 1. «Երևանի մանկան տուն»

Նկար 2.«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ»

Նկար 3. «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 4.Երևանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն

Նկար 5.«Երևանի մանկան տուն»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 6.«Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ»

Նկար 7.«Նորքի տուն-ինտերնատ»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 8.«Նորքի տուն-ինտերնատ»

Նկար 9.«Նուբարանշենի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»

Նկար 10. Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 11.«Գավառի մանկատուն»

Նկար 12.«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 13.«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»

Նկար 14.«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 15.«Նորքի տուն-ինտերնատ»

Նկար 16.«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 17.«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ»

Նկար 18.«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»

Նկար 19.«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 20.«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն

Նկար 21.«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 22.«Նուբարաշենի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»

Նկար 23.«Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 24.«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»

Նկար25.«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Տեսահոլովակ 1.«Ձորակ»հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 26.«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»

Նկար 27.«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 27.«Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն

Նկար 28.«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

BUSINESS CONSULT

Նկար 29.«Երևանի մանկան տուն»

Նկար 30.«Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 31.«Նորքի տուն-ինտերնատ»

Նկար 32.«Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ

Նկար 33.«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ



Նկար 34.«Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ»



Նկար 35.«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»



Նկար 36.«Երևանի մանկան տուն»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ



Նկար 37.Հագուստի և համազգեստի ձեռքբերման տեխնիկական բնութագիր

Նկար 38.«Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն»



Նկար 39.«Երևանի մանկան տուն»

9. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՐՎԱԾ ԿԱԴՐԵՐԻՑ



Ակտ

„Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն„ ՊՈԱԿ-ում օգտագործված հոգեմետ դեղորայքի դատարկ արվակների ոչնչացման մասին

„ 26 „ 04 2018թ. ք. Երևան

„Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն„ ՊՈԱԿ-ի ավագ բուժքույր Ն. Մկրտչյանս կազմեցի սույն ակտն այն մասին, որ աթ-ի [illegible]-ին ուստ. Քանաքեռ-Զեյթունի բաժնի ՔՀԲ-ի օվլ. ուստ. ավագ լեյտ Ռ.Երկանյանի և „Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն„ ՊՈԱԿ-ի հանձնաժողովի անդամների՝

1. [illegible] նախագահ
2. [illegible] անդամ
3. ..... անդամ

մասնակցությամբ /ջարդելու, այրելու/ միջոցով ոչնչացրինք 17.01 2018թ.-ից 17.03.23 2018թ.-ը օգտագործված

[illegible]

1.ամպուլները՝ ջարդելու ճանապարհով
2. փոշին և դեղահաբերը՝ այրելու ճանապարհով

Հանձնաժողովի անդամներ

Նախագահ 1. Ռ. [illegible]
2 [illegible]
3.

Մասնակցությամբ՝ Ռ. [illegible]

Ակտը կազմեց՝ Ն. Մկրտչյան

Նկար 40.«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն»



Նկար 41.«Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ»

BUSINESS CONSULT

Շնորհակալություն

BUSINESS CONSULT

Հայաստանի Հանրապետություն
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 19
Գործ. հասցե՝ Հանրապետության 22
Հեռ. (37410) 562 404
Էլ. փոստ՝ info@bc.am